**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — «21» 06. 2019թ.

ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

գնահատող անդամներ՝

- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան

-ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Տ.Աբրահամյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի Նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ Նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ ներքոհիշյալի՝

- Արարատ Սննդի Կոմբինատ ՍՊԸ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի մաս կազմող տեխնիկական բնութագրում նշված է / կարտոֆիլի պարունակությունը 360 գրամից ոչ պակաս/, այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում է / կարտոֆիլի պարունակությունը 400 գրամից ոչ պակաս/: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվեց մեկ աշխատանքային օրով և մասնակցին առաջարկվեց շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով շտկել է անհամապատասխանությունը:

Քանի որ 13.06.2019թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող,

1.2. 25.06.2019թ Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ Նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության Նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող** | Հ.Մելիքյան |
| **Գնահատող** | Ա.Մարգարյան |
| **Գնահատող** | Ա. Նազարյան |
| **Գնահատող** | Ա. Կարապետյան |
| **Գնումները համակարգող** | Տ.Աբրահամյան |